Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինը՝ Խաչվերացը, որը շարժական է, 2017 թվականին նշվեց սեպտեմբերի 17-ին:

Խաչի փառաբանության օրը Վիրահայոց թեմի եկեղեցիներում Սուրբ խորանին փառավորապես բարձրացվել էր ռեհանով զարդարված խաչը: Տոնի կապակցությամբ եկեղեցիներում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում պատարագիչն էր Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Հընթացս Սուրբ Պատարագի թեմական առաջնորդը հավուր պատշաճի քարոզ խոսեց օրվա խորհրդի մասին, մեկնաբանեց խաչի նշանակությունը և զորությունը, հավատացյալներին հորդորեց անսասան մնալ իրենց հավատքին, արժևորել, պահպանել, սերունդներին

փոխանցել եկեղեցական և ազգային տոները, անքակտելի պահել կապը Աստծու տան հետ:

Խաչի փառաբանության տոնին նվիրված նույն օրը Թեմի եկեղեցիներում, հավարտ երեկոյան ժամերգության կատարվեց Խաչվերացի թափորի հատուկ կարգ և օրհնվեց օրվա խորհրդանիշ ռեհանը ու բաժանվեց ժողովրդին:

Խաչվերացի տոնը Սրբազան Պատարագով և հանդիսավորությամբ նշանավորվեց Սամցխե Ջավախքի տարածաշրջանի Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ախալցիխեի, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Մառնեուլիի, Թեթրիծղարոյի, Ծալկայի շրջանների և գյուղերի հայոց եկեղեցիներում: